# Հ Ր Ա Մ Ա Ն N 119-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«23» **ՄԱՐՏԻ** 2015 **Թ.** **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ԱՐՏՈՒՇ ՄԱՔՈՒՆՑԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետ Ա. Օսիկյանի առաջարկությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի պետ Արտուշ Աշոտի Մաքունցին 2015 թվականի մարտի 23-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և փոխադրման կարգով նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի պաշտոնում:

Աշխատավարձը՝ ըստ հաստիքային ցուցակի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2015 թվականի մարտի 23-ից:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ**